ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտարարում է արտաքին մրցույթ Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի գլխավոր քաղաքաշինարարի (ծածկագիրը՝ 65-27.1-Մ2-5) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի գլխավոր քաղաքաշինարարի (ծածկագիրը՝ 65-27.1-Մ2-5) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Աշխատավայրը՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները դիմումները ներկայացնում են առցանց http://cso.gov.am/internal-external-competitions հղումով՝ մինչև **2024 թվականի հունիսի 21-ը՝ ժամը 24:00-ը ներառյալ:**

Անհրաժեշտ է կցել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (առցանց),

2. անձնագրի և/կամ նույնականացման քարտի՝ լուսապատճեն (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի կցում, ապա անհրաժեշտ է կցել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի(երի) լուսապատճեն(ները),

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի լուսապատճեն,

5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճեն,

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

- Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2024 թվականի օգոստոսի 7-ին՝ ժամը 11:00-ին, Քաղաքաշինության կոմիտեում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3):
- Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2024 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 15:00-ին, Քաղաքաշինության կոմիտեում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը **267 072** (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 5, 33-34, 49-51, 57, 86, 118-122, 146-161
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդվածներ՝ 2, 9-20, 28-30, 33-34
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=187324

«Քաղաքաշինության մասին» օրենք, հոդվածներ՝ 3-4, 10-11, 16-17, 19, 27-28
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187098

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդվածներ՝ 4-10, 13, 19, 20, 34, 36
Հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=175823

«Ճարտարապետական գործունեության մասին» օրենք, հոդվածներ՝ 1-25
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138919

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք, հոդվածներ՝ 1, 3-5, 8-14, 22, 30-31
Հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175724

«Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր՝ 71-74, 84, 85
Հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

Ինֆորմատիկա 7-րդ դասարան, Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Երևան 2012, էջեր՝ 10, 12, 30, 54
Հղումը՝ http://fliphtml5.com/fumf/egdx

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- «Խնդրի լուծում» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf**

- «Բարեվարքություն» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf**

- «Հաշվետվությունների մշակում» կոմպետենցիա,

Հղումը՝ **https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Քաղաքաշինության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, հեռախոսահամար՝ 011 621 768, էլեկտրոնային փոստի հասցե՝ **g.grigoryan@minurban.am**):

Հավելված N 11
Քաղաքաշինության կոմիտեի գլխավոր
քարտուղարի
2020 թ. մարտի 12-ի N 88-Ա/4 հրամանի
(փոփոխություն 2023թ հուլիսի 17-ի N 391-Ա/4 հրաման)

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՇԻՆԱՐԱՐ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ճարտարապետության և քաղաքաշինութան վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքաշինության և տարածական պլանավորման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր քաղաքաշինարար (ծածկագիրը՝ 65-27.1-Մ2-5)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր քաղաքաշինարարն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր քաղաքաշինարարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր վերլուծաբանը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.4 Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3:

2.Պաշտոնի բնութագիր

1.Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է քաղաքաշինության, տարածական պլանավորման և զարգացման բնագավառի օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ:
2. Իրականացնում է հանրապետությունում քաղաքաշինական իրադրությունը և զարգացման միտումների հետազոտման և վերլուծման աշխատանքներին, քաղաքաշինության բնագավառում հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածական զարգացման, նպատակային ու հատուկ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր ու հայեցակարգերի մշակման աշխատանքներ:
3. Իրականացնում է ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքներ, իրականացնում է նշված փաստաթղթերի դրույթների և առկա իրավիճակի մոնիթորինգը:
4. Իրականացնում է համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և դրանցում փոփոխություններ կատարելու աշխատանքներ:
5. Իրականացնում է միջոցառումներ՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման մեթոդաբանության կատարելագործման վերաբերյալ, աջակցում է տեղական

ինքնակառավարման մարմիններին համայնքների գլխավոր հատակագծերի, գոտևորման նախագծերի և զարգացման ծրագրերի մշակման հարցերում:

6. Մասնակցում է քաղաքաշինական և բնական լանդշաֆտների ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, տարբեր գործառնական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակման աշխատանքներին:

7. Մասնակցում է քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման առաջարկությունների, այդ տարածքների քաղաքաշինական վերազարգացման ծրագրերի, առանձին հողահատկացումների վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը և նախապատրաստում եզրակացություն, հատուկ կարգավորման օբյեկտների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացին:

8. Մասնակցում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման գործընթացին, նախապատրաստում է կարծիք այլ գերատեսչություններից ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, իրականացնում է ՀՀ կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, նախարարությունների, գերատեսչությունների առաջադրած քաղաքաշինական հարցերի ուսումնասիրություն, եզրակացությունների նախապատրաստում:

9. Մասնակցում է տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների հեռանկարային ծրագրերի կազմման աշխատանքներին, ինժեներատրանսպորտային ուղեգծերի ընտրությանը, օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն դրանց կառուցվածքների և սպասարկման օբյեկտների տեղադրման վերաբերյալ:

10. Նախապատրաստում է համապատասխան եզրակացություն քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման առաջարկների վերաբերյալ:

11. Մասնակցում է բնագավառի տեղեկատվական բազայի համալրման աշխատանքներին:

Իրավունքները՝

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն այլ գերատեսչություններից և Կոմիտեի ստորաբաժանումներից, ըստ անհրաժեշտության ներկայացնել առաջարկություններ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացների, ինչպես նաև մշակման փուլում գտնվող փաստաթղթերի վերաբերյալ,
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու, աշխատանքային կարգով քննարկումներ կազմակերպելու, այդ քննարկումներին տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների ու այլ շահագրգիռ կողմերի մասնակցության վերաբերյալ,
- մասնակցել լանդշաֆտային քաղաքականության իրականացման աշխատանքներին, քաղաքաշինական և բնական լանդշաֆտների ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, տարբեր գործառնական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակման աշխատանքներին,
- մասնակցել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և դրանցում փոփոխություններ կատարելու գործընթացի համակարգման աշխատանքներին, բաժնի պետի հանձնարարությամբ աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների տարածական պլանավորման նախագծերի և զարգացման ծրագրերի մշակման հարցերում,

- քաղաքաշինության, տարածական պլանավորման և զարգացման բնագավառի օրենքների և այլ իրավական ակտերի մշակման փուլում գտնվող նախագծերը ներկայացնել այլ գերատեսչությունների քննարկմանը, ամփոփել արդյունքները,
- ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները ներկայացնել այլ գերատեսչությունների քննարկման, ներկայացնել նշված փաստաթղթերի դրույթների և առկա իրավիճակի մոնիթորինգը,
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ,
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցել քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման առաջարկությունների, այդ տարածքների քաղաքաշինական վերազարգացման ծրագրերի, առանձին հողահատկացումների վերաբերյալ եզրակացության պատրաստման աշխատանքներին,
- մասնակցել քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման առաջարկների վերաբերյալ եզրակացության պատրաստման աշխատանքներին,
- ներկայացնել բնագավառի տեղեկատվական բազայի համալրման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և առաջարկություններ:

Պարտականությունները՝

- իրականացնել քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրների, իրավական դաշտի և միջազգային փորձի վերլուծություն և գնահատում,
- Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր, մասնակցել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը,
- իր լիազորությունների շրջանակներում՝ բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ներկայացնել տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և դրանցում փոփոխություններ կատարելու աշխատանքների վերաբերայլ հաշվետվություններ և եզրակացություններ,
- ուսումնասիրել իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիմումները և պատրաստել պատասխան գրություններ,
- մասնակցել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն
2	Ոլորտ	Ճարտարապետություն և շինարարություն
3	Ենթաոլորտ	Ճարտարապետություն և քաղաքաշինություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքաշինության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Տարածքային կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: